ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 օգոստոսի 2023թ. թիվ 382-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՄԼՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 189-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հավելվածի 2.5 բաժնի 2-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 166-Ն որոշումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2002 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 189-Ա որոշման թիվ 64 հավելվածով հաստատված կանոնադրության մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝

1) 4-րդ կետում՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի հունիսի 9-ի ՀՕ-266-Ն օրենքի 1-ին հոդվածի 3-րդ ենթակետի,

2) 41-րդ, 42-րդ, 43-րդ, 79-րդ, 80-րդ, 102-րդ կետերում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի թիվ 166-Ն որոշման 1-ին կետի:

2. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շամլուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության փոփոխությունը:

3. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շամլուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ս.Սոսինյանին՝

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շամլուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության փոփոխությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ սահմանված կարգով պետական գրանցում իրականացնելու նպատակով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

07/08/23

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. օգոստոսի 4
ք.Վանաձոր

Հաստատված է
ՀՀ Լոռու մարզպետի
2023թ. օգոստոսի 4-ի
թիվ 382-Ա որոշմամբ

Կազմված է «_____» _____ 2023թ.
Բաղկացած է 2 էջից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
Օրինակ _____

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ
ԿՈՂՄԻՑ 21.01.2003թ.
ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 96.210.00652
ՀՎՀՀ 06604243
_____ ԳՐԱՆՑՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ԹԻՎ _____ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑՎԵԼ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«____» _____ 2023թ.

_____ _____

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՄԼՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՊՈԱԿ-ի կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. 4-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«Դպրոցի գտնվելու վայրն է՝ ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, ք.Շամլուղ, 8-րդ փողոց 1».

2. 41-րդ կետում «առնվազն վեց անդամ» բառերը փոխարինել «առնվազն երկու երրորդը» բառերով.

3. 42-րդ կետում «փակ» բառը փոխարինել «բաց» բառով.

4. 43-րդ կետից հետո հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 43.1-ին կետով.

«43.1. Տնօրենի ընտրության ժամանակ սույն կանոնադրության 80-րդ կետի 1.1-ին ենթակետում և 102-րդ կետի 1.1-ին ենթակետում նշված քվեարկության արդյունքները պարտադիր են մանկավարժական և ծնողական խորհուրդների կողմից առաջադրված դպրոցի խորհրդի անդամների համար: Ծնողական և մանկավարժական խորհուրդների՝ կառավարման խորհրդում առաջադրած անդամները, խորհուրդների կողմից քվեարկության արդյունքում ձայների հավասարությամբ պայմանավորված՝ տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար տվյալ մրցույթի ժամանակ թեկնածու չառաջադրելու դեպքում, ազատ են իրենց քվեարկության ժամանակ:».

5. 79-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին ենթակետով.

«1.1) դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդի ներկայացրած զարգացման ծրագիրը».

6. 80-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին ենթակետով.

«1.1) քվեարկության միջոցով, դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդին հավանություն տալու,».

7. 102-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին ենթակետով.

«1.1) քննարկում է դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդի ներկայացրած զարգացման ծրագիրը և քվեարկությամբ որոշում դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդի իր թեկնածուին.»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է _____ գրանցված «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շամլուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության անբաժանելի մասը: